

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# ՔԱՂԱՔԱՑԻ

Շ Ա Ի Ա Թ Ա Թ Ե Ի Թ

## THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 5.

ՖԵՆՈ . ԲՈՒ . ՇԱԲԱԹ . ՍԵՊՏ . 13 . 1902

ԳԻՆ 5 ՍԵՆԹ

### DEMOCRATIC COUNTY PLATFORM.

The Democratic party of Fresno County, in convention assembled, reasserts its allegiance to those fundamental principles of the Constitution of the United States, and of the Declaration of Independence, upon which the Democratic party is founded, and indorses the national platforms heretofore adopted by the party. It condemns the policy of the Republican party, which has led the country away from its allegiance to a democratic form of government into the paths of territorial conquests, with the accompanying evils of imperialism, and pledges itself to use all legitimate means to prevent the further embroilment of this country in foreign affairs.

2. Realizing that the nation is confronted and menaced by grave and serious danger, consequent upon the unrestricted accumulation in a few hands of the capital of the country, we condemn the failure of the Republican administration to proceed under the law against such iniquitous combines as the beef trust, and demand that such legislation be enacted as shall forever make it impossible for the capitalistic interest to fix and regulate markets, extort exorbitant prices from the consumer and hold labor at its mercy.

3. We sympathize with organized labor in all its just and reasonable efforts to secure an adequate remuneration, and condemn as vicious the proposition that capital may combine to control the price of labor while denying to labor the right to organize to protect itself from the oppressions of combined capital.

4. We believe in the public ownership of the water of the natural streams of the State, and we commend the work of the Forest and Water Association of this State and pledge to them the support to aid and further the objects of said association.

5. We view with alarm the chaotic condition

of affairs resulting from the dominance of a boss-ridden party in the government of the State. The spectacle of the State Executive charged with malfeasance in office, the charges formulated by members of his own political party, and the employment of machine methods to impose upon the people, the repetition of the disgraceful affairs which has existed in the past four years, is to be deplored, and we will by all legitimate means endeavor to end the Republican control of the State by which its affairs are mismanaged and its interests neglected. To this end we pledge ourselves to the nomination of a Democratic candidate for Governor in whom the people may have implicit and deserved confidence, and upon whom we may rely with assurance for a wise and statesmanlike administration of the affairs of the State and economical and honest government and a thorough conservation of the best interests of the people.

6. In the administration of county affairs we condemn the wasteful expenditure of \$30,000 by the Republican majority of the Board of Supervisors in the purchase of the race track and fair grounds, to be used as a gentlemen's driving park, thus saddling the county with an incubus at once costly, unproductive and unnecessary. We deplore the inadequate housing of the county's indigent, the crude conveniences made to serve at the County Hospital, the extravagance which characterized the county government, and the lax methods allowed to be pursued by certain officials under the sheltering wing of the Republican members of the supervisory body, with the result that the county is made to pay for services not performed; and we pledge ourselves to every legitimate effort to so change the personnel of the county government as to secure a radical change in condition and the substitution of retrenchment and efficiency for the present policy of wastefulness and incompetency.

7. We condemn the present system of County Horticulturalist Commissioners as worthless and

worse than wasteful, and pledge our nominees to the Senate and Assembly to use their best endeavors to abolish the same and to substitute therefor a single commissioner of expert knowledge and practical skill, and to convert this department into one which shall protect the interests of our orchardists and vineyardists and do away with the dangerous jeopardy which now exists.

8. We indorse the old Jacksonian principle "to the victor belongs the spoils," but we condemn the custom of converting public office into a private snap and the practice of nepotism in the public service. We recommend that in the appointments hereafter to be made a decent regard be had to personal merit and party service.

9. That we heartily indorse the candidacy of the Hon. E. C. Farnsworth of Visalia for Associate Justice of the Supreme Court of California, and recommend that our delegate to the State convention use all honorable means in their power to secure his nomination.

W. J. TINNIN, Chairman,  
N. L. F. BACHMAN,  
WILLARD BROOKS,  
E. P. DEW...  
C. U. HENDERSON,  
JOHN F. FORNEY.

**ԱՐՏԱՔՈՑ ԿԱՐԳԻ ԺՈՂՈՎ**

"Քալ. Բէյրին Կրօւըրս Ասօշիէշըն"ի Սեպտ 22ին:

—0—

Քալ. Բէյրին Կրօւըրս Ասօշիէշընի արտաքոյ կարգի մէկ ժողովն կանչուած է տեղի ունենալ Այնթապն Հօլի մէջ, ի Ֆրէզնօ, Քալիֆօրնիա, Երկուշարթի օր, Սեպտ. 22, 1902, առաւօտեան ժամը 10ին՝ Ընկերութեան 100,000 սուրբ փոխ առնելու սահմանափակ իրաւասութիւնը 500,000 սուրբի՝ փոխելու նպատակաւ, բարեփոխելով Ներքին Կանոնագրութեան Կրգ յօդուածի Կրգ բաժինը՝ որ կարգացուի այսպէս.

Պարտք ընել և զրամ փոխ առնել Ընկերութեան նպատակին համար՝ ոչ աւելի քան 500,000 սուրբի հաւաքական գումարէ մը. սալ ո և է և ամեն պարտամուրհակ, պարտաթուղթ և ուրիշ պարտուց վկայագրեր. Գրաւ կամ ուրիշ կերպիւ Ընկերութեան ո և է մէկ ստացուածքը ապահովութիւն տալ՝ պայմանաւ որ այսպիսի պարտքերու պայմաններն ու գումարները վարիչներու ժողովի արձանագրութեանց մէջ գրուած ըլլան. պարտամուրհակը կամ Ընկերութեան պարտքը ցոյց տուող ո և է պարտաւորագիր և այս առթիւ Նախագահի և ստեղծագիր կողմէ, այդ սնուամբ, ստաւագրուած բոլոր ապահովագիրներն Ընկերութեան համար պարտաւորիչ պիտի ճանչցուին՝

Քալ. Բէյրին Կրօւըրս Ասօշիէշըն

Ա. Լ. ՍԷՅՐԸ, Ասանադպիր

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ

**Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.**

ԿԱՌՔԵՐՈՒ ՀԱՆԳՍԱՐԱՆ

Հարնէս, Մարտի և Ծածկոցներ: Սյս գաշտի մէջ  
ամենատան և ընդարձակ վաճառատունը  
1847—1849 Թուարի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

ձ. Մ. Սերրեան, ձ. Պաննըր, Յ. Մ. Սերրեան

**Սան Ռօքիև Վալի Լմևտ Քօ,**

ձ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

**ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ**

Թիւ 954 ձէ՛Յ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա:  
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փախաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կարուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շտա մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

**DR. GAZARIAN DENTIST**

**Տրք. Յ. Լազարեան,**

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Չանս Պլաք, ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնօ, Քալ.  
Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գահացում Յաճախողներուն: Գիները միշտ չափաւոր:  
Թէլէֆօն — — — — Ուայթ 231

**ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ**

Ամենաբարձր գին կը վճարեն

Թ Ո Ւ Ջ Ի , Դ Ե Ղ Ջ Ի Ո Ի Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ  
Ջ Ո Ր Պ Տ Ո Ի Ղ Ն Ե Ր Ո Ի :

**ՖՐԷԶՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹՈՐԻ**

\*\*\* Ա. Տ Ի Ա Վ Չ Չ Ի Օ — ՏԷՐ \*\*\*

Սան Պէնիթօ փողոց, Ա. յի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

**Թ Ր Է Յ Ն Ե Ր**

100,000 Սև թուղթի թրէյդ կը ծախուին վարձու առնելէ շտա սման գներով:

Օրինակը տեսնելու կամ գնի համար դիմել Ա.

ձՕՆ ԿՐՈՒՄԷԹԹ,  
Մատիսըն և Պանըրիմիլիոցաւ 1144 ձէ՛յ Ըթրիթ.

ՀՐԵՇՏԱԿ ԳԱՐՆԱՆ

Հրեշտակ գարնան, այդ խոր քունէդ  
Արթնցիր բեր բնութեան  
Կեանք ու ծիծաղ, զուարթ օրեր՝  
Մահկանացուաց, մարդկութեան:

Թռչուններու լեզուովն անուշ  
Քաղցր խօսէ երգէ երգ,  
Ջուրէն լուռին խոխոջներդ  
Փայլին լոյսին դէմ բեկ բեկ:

Գաշտէն անցիր, լերանց վերև,  
Ծառերուն ալ հպիր գուն.  
Թեթև հպմամբ թող նոր հագնին  
Թարմ հազուամաներ գոյն զգոյն:

Հրեշտակ գարնան, հոգի անմահ,  
Ջարթիր դէմքդ ցոյց տուր մեզ,  
Ձոր վարդենայ կսկանին մէջ  
Ձգուշութեամբ կը պահես:

Մտիր՝ մեղմիկ զեփուռին մէջ,  
Շոյէ ծաղիկ, ծառ ու խոտ,  
Խաղցիր գետին, առուակին հետ,  
Բեր մեզ անոյշ բիւր ու հոտ:

Արեգակի միջէն անցիր՝  
Տաքութիւն բեր աշխարհի,  
Երկրագործը թող զիւրութեամբ  
Գաշտերուն մէջ աշխատի:

Հրեշտակ գարնան, ոգի անմահ,  
Մեր միջէն ալ անցիր գուն,  
Հայ ազգին բեր նոր կեանք հոգի,  
Անվախ սիրտ մը, նոր գարուն:

Թող Թմրածներ քեզմով զարթնին,  
Երբ դու քունէդ արթննաս.  
Գործին սիրով ազատ ըլլան,  
Երբ գալ տարի նորէն գաս:

Վ Է Ճ Ը

Քանի մ'իրարու գտան ըսինք խօսքեր,  
Բարկացած ինէ՛ ձգեց հեռացաւ.  
Պահեց իր դէմքը ծառերուն ետեւ,  
Լռիկ ու միշիկ հեծեց ու լացաւ:

Ծոհեցաւ վարդ մը քաղեց ու մեղմիւ  
Շուրթներուն տարաւ պաղաւ զայն ուժով  
Մեղմեաւ պահ մը իր սրտի կսկիծ  
Իմ՝ անգութ խօսքեր մտնալու յոյսով:

Բայց ճիշ մ'արձակեց ցտերով լեցուն,  
Փուշ մը խրած էր շրթանց մեղրենի.  
Քովը վազեցի՝ հաշա էինք զարծեալ՝  
Չայն անհուն սիրով սրտիս, սեղմեցի:

Հ. Է.

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ  
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, — Ֆրաբ Պա.բ — Ֆրէզնօ.  
Թէլէֆօն — — — Ուայթ 744

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-  
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն սպրանք  
իրենց անասկներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ  
քիչեր կրնան թէ իրենց գիները բաղդատարար ու-  
րիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահա-  
ցնէք զուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ  
յետոյ սերիշ սեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է  
ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

ՄԻՆՐԱՆ Գ. ՍԷՐԱՅԼԵԱՆ

Գ Ծ Ա Գ Ր Ի Զ

819 Մարքէթ Ըթրիթ, Սան Ֆրանսիսկօ, Քալ.

Իւզաների, ջրաների, փասթէլ ևն. նկարներ  
Քալիֆօրնիոյ մէջ մեր ունեցած բազմաթիւ բարեկամ-  
ներն ու յաճախորդներն պէտք չունին գովեստներ լսել  
մեր գործերուն համար, որոնք իրենք իրենց համար կը  
խօսին արդէն: Ուստի ծանուցանել հասարակութեան  
մեր հասցէն բաւական կը սեպենք:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՅԻԻ տպարանին մէջ կը տպուին ամէն  
անասկ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցեստոմս, նա-  
մակապուխ, պահարան, հարսանեկան ծանուցագիր և  
տետրակներ. գոհացուցիչ գներով:

ԾԱԽՈՒ ԳՐԻԵՐ

Ամէն անոնք որ կը փափաքին վենետիկ տպուած  
որ և է գիրք ստանալ, կրնան զայն ձեռք բերել խրմ-  
րագրութեան միջոցաւ, որ նոյն Միսրանութեան գոր-  
ծակալ կարգուած է:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

Sopushy Panyanurak Lnak.

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Ե Ջ Ո Ւ Ր Ը

ՅՐԷՋՆՈՅԻՆՆ Է

\*\* ՓՈՐՁԵՑԷՔ ԶԱՅՆ ԵՒ ՀԱՄՈՋՈՒԵՑԷՔ \*\*

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՑ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄՔԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար  
Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ  
Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ  
Բաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին Խմբագրու-  
թեան հետեւեալ հասցէի:

To The Editor of  
THE CITIZEN  
P. O. Box 1224 Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year,.....\$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՋՆՕ, ՔԱԼԻՓՕՐՆԻԱ. ՍԵՊՏ. 13, 1902

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Քաղաքացին ձեռք է կը վաճառուի 3 Սէնթի միայն  
Քալիֆորնիայէ դուրս ուրիշ ամեն քաղաքներու մէջ:  
Մեր Գործակալներէն կը խնդրենք որ սակէ վերջ  
այս որոշեալ գնով վաճառեն զայն:

—Աւելցած թերթերը առ այժմ մեզ վերադարձնելու  
պէտք չկայ. այս մասին կը գրենք առանձին նա-  
մակաւ:

—Ստակի փոխարէն նամակադրոյժ գրկելու չէ:  
Հաշիւները երկու ամիսը մի անգամ գրկելու է մեզ.  
ամեն շաբաթ դրամ գրկելու հարկ չի կայ:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Քաղաքիս Հայոց Գրադարանի Միութեան Գոր-  
ծադիր Ժողովը վերջերս շատ խնամաւոր քայլ մ'առաւ  
որ ներկայ պարագաներու տակ արժանի է մասնաւոր  
յիշատակութեան: Սո՛ւ յատուկ նամակներով գիտնում  
ըբաւ Միութեան այն ամեն անդամներուն որք երկար  
ատենէ ի վեր իրենց սուրբերը չէին վճարած, ու  
պահանջեց անոնցէ որ փութան այդ մասին կար-  
գազրութիւն մը ընել շուտով Գանձապետին հետ՝ որ-  
պէտքի սպաս մնային անգամազուրկ ըլլալու անպատե-  
հութենէն:

Գրադարանը իր ներկայ անկերպարան կացութե-  
նէն ազատելու համար Գործադիր Ժողովոյ առած  
այս քայլը միակ միջոցն էր որ պիտի կրնայինք մատ-

նանիշ ընել: Սանդուխի մը վերին աստիճանին հաս-  
նելու միակ կամ լաւագոյն ճամբան առաջին աստի-  
ճանէն սկսիլն է միշտ, և այս խնդրի մէջ առաջին  
քայլը չէր կրնար ուրիշ բան մը ըլլալ՝ եթէ ոչ գիտ-  
նալ նախ թէ որո՞նք էին ընկերութեան անդամները,  
կամ որոնցմով պիտի կրնայինք "Գրադարանի դռնե-  
րը բանալ հասարակութեան առջև":

Սակայն Գործադիր Ժողովոյ այս ընթացքը, թէև  
ըստ ինքեան գովելի և գնահատութեան արժանի, չէ  
կրցած բոլոր անդամներու համակրանայ արժանա-  
նալ: Վստահելի աղբիւրներէ կը լսենք թէ կայ տա-  
կաւին փոքրամասնութիւն մը որ կը բողոքէ այս պա-  
հանջարին դէմ, ապօրինութիւն մը և եղծում մը  
կը նկատէ զայն: Անվաւեր կը համարի իւր քուէովը  
խիկ ընտրուած ներկայ Գործադիր Ժողովը ու անոր  
բոլոր ձեռնարկները, և որ սակի սակալին ու անվա-  
յիւն է՝ մեքենայութիւններ ու թաքուն նպատակներ  
կը տեսնէ այս դրամ պահանջելու գործին մէջ. ու  
կը պատրաստուի յատուկ կայ Ընդհանուր Ժողովին  
առջև իր բողոքները ներկայացնել:

Մենք ի հարկէ չէինք գաղմանար այս անհիմն  
ամբաստանութիւններն ու անտեղի խօսքերը լսելով,  
վասն զի գիտէնք թէ իր պարտք վճարել չուզող մար-  
դը պատրուակի մը կռթնելու յոյսով դրամատիրոջ  
պահանջը անտեղի կը տեսնէ միշտ իսկ անոր սպառ-  
նալիքը՝ անարդար և ապօրինի: Գիտէինք նաև թէ  
բողոքողներ պիտի գանուէին Գործադիր Ժողովոյ այս  
ընտրութիւն դէմ, բայց կը խորհէինք թէ սառնք պահ  
մը խնդրին վրայ լրջութեամբ մտածելէ վերջ իրենց սը-  
խալը պիտի տեսնէին և փոխանակ սպառնալիքներ ընե-  
լու իրենց մի քանի տուարի պարտքը պիտի վճարէին  
պարտաճանաչ մարդու մը նման, ու միւս ընկերներու  
հետ ձեռք ձեռքի սալով պիտի ջանային Գրադարանը  
իրեն վայել զիրքի մը մէջ դնելու: Բայց կերևի թէ  
սխալած ենք եղբւր մեր կարծիքին մէջ, թէև յուսահա-  
տելու մեծ պատճառ մը չունեցանք դեռ, վասն զի կըր-  
նայ ըլլալ որ վերջի բազէին իսկ այս պարտքները դառ-  
նան իրենց ընտրած սխալ ճամբայէն: Եւ ո՞չ սպա-  
քէն արեւելեան առածը կըսէ թէ "Հոգին դեռ չեյած  
հոգևարէ մը անգամ յոյս չեմ կտրեր, վասն զի  
մեռած չէ սակաւին":

\*\*\*  
Փափաքելի է որ Զամիչի Ընկերութեան բոլոր հայ  
անդամները Սեպտ. 22ի ժողովին մէջ առաջարկեալ  
բարեփոխութեան ի նպաստ քուէ տային, ու առա-  
ջարկութիւնը նոյնութեամբ ընդունուէր, որպէս զի Ըն-  
կերութիւնը կարող ըլլար զօհանջուցիչ նախաձեռն մը  
առլ իրեն յանձնուած չամիչներու տէրերուն:

ԱԶԳ

Տեսնելով որ մեր ծանուցումներն աւելնալով թերթիս  
մէջ բուռնաբար մեծ տեղ մը սկսած են գրաւել և ստի-  
պել մեզ միշտ յետաձգել կարևոր յօդուածներ՝ այս ան-  
պատեհութեան առաջն առնելու համար որոշած ենք  
Քաղաքացիին վրայ չորս երեսներ ևս աւելցնել՝ վե-  
նետիկէն այս օրերս սպասուած քանի մը պակասեալ  
ստուերու հատնելէն անխնայապէս վերջը:

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ

Բ.

Մարդկային քաղաքական սոցիալական գաղափարը անցնող դարուն մէջ հսկայ քայլ մը առաւ: Անկէ առաջ հասարակ մահկանացուն գերի մէք. անոր ձայնն ու կամքը նշանակութեանէ զուրկ էին բոլորովին: Բարոյական այս մեծ քայլը՝ աւելորդ է ըսել թէ ուղղակի բարեք մը արտադրած չէ Հայ ազգին համար. բայց անոր անուղղակի ազդեցութիւնը յառաջ բերած է մեր մէջ ընկերական և ազգային արդի մեծ շարժումը որ կարելի չէ անտես ընել: Անկախ ազգ մը ըլլալու համար մեր արդի ջանքերը, յեղափոխական կազմակերպութեանց գոյութիւնը ու բռնաւորի մը լուծը ջախջախելու դիւցաւանական փորձերը անուղղակի արդիւնքներն են տասնեկիններորդ դարու մէջ առնուած այդ հսկայական քայլին:

Հարիւր տարի առաջ Ամերիկայի մէջ գեռ ազատութեան, հաւասարութեան և քաղաքական իրաւունց սերմերը նոր ցանուած էին այս երկրի նախահայրերու ձեռքով: Եւրոպայի մէջ Գաղղիական յեղափոխութեան բարեբար ազդեցութիւնը զգալի եղած չէր տակաւին: Ֆրանսայէ, Հոլանտայէ և Չեխոսլովակայէ զուրս ժողովրդական կառավարութեան մը գաղափարը անգամ անծանօթ էր ժողովրդին: Ռուսիոյ, Աւստրիոյ, Սպանիոյ, Թուրքիոյ և անոնց ունեցած դրսի երկիրներուն մէջ կայսեր կամ թագաւորի կամքը միահեծան կառավարութիւնն էր: Անգղիոյ մէջ ներկայացուցիչներու կառավարութիւնը անտան մէք միայն: Մինչև 1835 քսան մարդէն մէկը միայն հազիւ ձայն ու քուուէ ունէր քաղաքական ընտրութեանց մէջ յԱմերիկա: Հասարակ ժողովուրդը անձայն էր բոլորովին. հարուստներն ու հողատէրներն էին միայն որք կրնային քուէ տալ ընտրութեանց ժամանակ: Բոլոր Եւրոպայի մէջ գրեթէ երազ մը կը նկատուէր սա գաղափարը թէ իշխանութիւն մը բոլոր ժողովրդի օգտին ու զարգացման համար միայն կազմակերպուած ըլլալու է: Ուր որ կար սակայն ներկայացուցիչներու ժողով մը այդ ալ ուրիշ քան մը չէր եթէ ոչ պարզ մէքենայ մը թագաւորին կամ կայսրին կամքը արձանագորդ: Եթէ հարիւր տարի առաջ ըսուէր թէ 1900ին իշխանութիւններն ժողովրդի քուէովն ու հասարակաց կարծիքովը պիտի վարուէին խորհրդարանական եղանակաւ, տեսակ մը կատակ կամ վարպետ երազ պիտի կարծուէր միայն: Հասարակ մարդը գերի մէք հարուստին: Հողը կը վերաբերէր քանի մը մեծատուններու միայն: Գործաւորին համար որ մը կտոր մը հողի տէր ըլլալու յոյսը անկարելի էր երազել. նա իր ծնած երկրին կը վերաբերէր, և երկիրը՝ այս կամ այն հարուստին: Այն մարդը որոյ զրամագրուելը իր աշխատութիւնն էր կամ ճակտին քրտինքը միայն՝ երջանկութեան այնչափ յոյս ունէր, որչափ յոյս կըրնայ տածել շղթայակապ գերի մը իր սիրով ծառայութեան մէջ:

Անհատական սոցիալութիւնը քաղաքական իրաւանց գաղափարէն շատ աւալի անիրականանալի երազ

մը կը նկատուէր դար մը առաջ: Եւ իրապէս աշխարհը նոր սկսած է մուծ դարերու կրօնական նախապաշարմանց բռնութենէն ազատիլ: Սպանիոյ մէջ հաւատաքննութեան ատեանները կը շարունակուէին տակաւին: Մէկը այս կամ այն վարդապետութեանը չի հաւատացած ըլլալուն համար կրնար այրուիլ կամ կախաղան հանուիլ: Հրեաները ստակալի շարչարանաց ենթարկուած էին ամեն տեղ: Անգղիոյ մէջ կաթոլիկները կը հալածուէին այնչափ որչափ մենք Հայերս կը հալածուէինք այսօր Թուրքիոյ կամ Ռուսիոյ մէջ: Իրլանտայի մէջ անոնք ոչ կրնային հողատէր ըլլալ ոչ ալ պաշտօն վարել և ոչ ալ վայելիլ այն քաղաքական իրաւունքները զորս կրնային արուիլ նոյն ստաիւնանի ուրիշ քրիստոնեայ ազգաց:

Օրէնքը տեսակ մը բարբարոսութիւն էր աղքատի դէմ, իսկ մեղմ՝ հարուստին համար: Աղքատ մը կախաղան կը բարձրանար՝ մինչ նոյն օրէնքը հարուստին համար ոչ գորութիւն ունէր և ոչ ալ նշանակութիւն: Վերջի գարուս մէկ երբորդ մասը անցած էր արդէն երբ մարդիկ նոր սկսեցին զգալ թէ վայսպագութիւն էր մէկը մահուան գատապարտել հին վերաբիւ մը գողցած ըլլալուն համար: Դար մը առաջ Անգղիոյ մէջ գեռ կախաղանը անընդհատ կը գործէր՝ աղքատը պատժելու: Հոն արդարութեան օրէնքը մահու պատժի կը անօրինէր հարիւր վախճան տեսակ յանցանքներու՝ որոց ամենէ մեծը մարդասպանութիւնն էր, իսկ փոքրագոյնը՝ ծառաստանէ մը քանի մը խնձոր գողցած ըլլալու սպառափելի եղեռնագործութիւնը: Շատ անգամ Անգղիոյ մէջ մահուան պատժի կը կրէին աղքատներ՝ զրաձի մը սալորի ծառին վրայ բռնուած ըլլալուն յանցանքով: Քանի քանի անգամներ մարդիկ ձերբակալուած են աննշան յանցանքի մը համար, որ մը վերջ գտուած, երբորդ օրը կախաղան բարձրացած, իսկ յաջորդ օրը անոնց բոլորովին անտեղ ըլլալը սպացուցուած է:

Դար մը առաջ մարդիկ կը խորհէին թէ երբոր աղքատ մը ձերբակալուէր ո՛ր և է սմբաստանութեամբ անհրաժեշտ յանցաւոր նկատուելու և պատժուելու էր փութով. մինչդեռ այսօր սմբաստանեալ մը հոգ չէ որչափ ալ ակներե ըլլայ իր յանցանքը, օրէնքի առջև անտեղ է մինչև որ դատարանը զայն յանցաւոր հռչակէ:

Օրէնքը հապճէպով գործ չի տեսներ հիմայ. կամայ կը քայլէ, զգուշութեամբ ու շրջահայեցութեամբ կը գործէ, օրպէսզի մի գուցէ անտեղ մարդը պատժուի կամ արդար արիւն թափուի: Արդի, մանաւանդ Ամերիկեան օրինադիրքերը՝ նախապատիւ կը սեպեն սասը յանցաւոր անպատժի ձեռքէ փախցուներ, քան մէկ անտեղ մարդ պատժել յանիրաւի:

Չեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Յ. Շեփիրտ և շ. Ընկ.

1123 ձե՞Յ Ըսթրիթ  
Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդ մէջո գոհացում կտանան:

ԺԱՆ ԱԼԹԸՆ

Մինտա Չերազ ը՛Այսինի վերջի թիւերէ մէկին մէջ մանրամասն տեղեկութիւններ կուտար անցեալնէս ըր այս Հայ երկրագործին վրայ պատմելով անոր կատարած գերը Գաղղիոյ մէջ:

Ժան Ալթընի մասին որոշ գողտփար մը տալու համար ձեր ընթերցողաց՝ հաւեալը կը քաղեմ Վարուսի ընդարձակ համադրատարանէն:

Ժան Ալթըն հողագործ ծնած է ի Պարսկաստան 1709ին, և մեռած է Գաղղիոյ մէջ 1774ին: Նախնադային կուտակայի սրղին էր այս անձը որ իր մանկութեան ատեն առեւանգուելով՝ իբր գերի ծախուեցաւ: Տասն և չորս տարի Անատոլիոյ մէջ Տըրքնի ու Քանայակի մշակութեամբ գրաղեցաւ: Ժամանակ մը վերջ Ալթըն յաջողեցաւ փախչիլ ու Զմիւռնիոյ Գաղղիական հիւպատոսին քով ապաստանիլ, ու անկէ նոյն հիւպատոսի ձեռքով Մարտէյս զրկուեցաւ: Ժան իրեն հետ Գաղղիա բերաւ արտոնի հունար՝ իր կեանքն իսկ վտանգի ենթարկելով, սրովհետեւ Տաճկաստանի մէջ մահու պատիժ անօրինուած էր այդ հունտէն դուրս արտածողներուն համար:

Յրոնտայի մէջ շատ աշխատեցաւ որ կարող ըլլար իր բերած հունար մշակել, բայց իր ջանքերը իրողը եղան: Քիչ ատեն վերջ բաղդ ունեցաւ ամուսնանալ Մարսիլիացի աղջկան մը հետ որ 60000 Ֆրանքի օժիտ մը կը պարգևէր իրեն: Այս ժամանակները Ալթըն անձամբ Վերսայլ գնաց ու Լուզովիկոս ասան և մէկերորդէ ունկնդրութիւն մը խնդրեց ու անկէ արտօնութիւն ստացաւ իր բերած հունար մշակելու: Սակայն ժամանակէ վերջ կառավարութենէն քաջաղերութիւն չի գտնուելով վճատեցաւ ու բուր ունեցած հարստութիւնն ալ փճացուց: Բայց ի վերջոյ ունեցած չունեցածը ժողուելով Ալինեօնի մէջ սկսեց շարունակել իր այնչափ սիրած աշխատութիւնը որոյ առաջին փորձերը յաջողութեամբ պատկուեցան: Եւ այսօր Վօքլիւզի նախնազը, որոյ գլխաւոր քաղաքն է Ալինեօն, տարին քսան միլիոն ֆրանքէ աւելի տարն կարտադրէ:

Ալթըն որ թշուառութեան և աղքատութեան մատուցած մնաց, մէկ աղջիկ մը միայն ունեցաւ, որ հիւանդանոցի մը մէջ մեռաւ 1821ին. ճիշտ այն ատեն երբ Վոգլիւզի Նախնադային Վարչութիւնը իւր հօր պատուանշան մը կը նուիրէր, որն որ այժմ Ալինեօնի Գալվէթ Թանգարանին մէջ պահուած կը մնայ:

1846էն ի վեր Ալինեօնի Նօթը Տամ աէ Տօմի ժայռին վրայ Ալթընի մահարձանը կանգնած կը կենայ: Մ. Մամուրեան 1889ին պատմած է Պ. Չերազի թէ Զմիւռնիացի ձեր մը կը ճանչնայ եղբր Ալթընը, որ Ալթըն ոչու Յովհաննէս կամ Ալթունեան Յովհաննէս կը յորջրջուի եղբր իր երիտասարդութեան ժամանակ: Յովհաննէս պարսկահայ գիւղացիի մը զաւակը՝ տաճիկներու ձեռքով առեւանգուած ու փճառուած և յետոյ յաջողած էր ապաստանիլ Զմիւռնեոյ Գաղղիական հիւպատոսարանը, և որոյ միջոցաւ Մարսիլիա

զրկուած էր գաղտնի եղանակաւ:  
Այս համատու կենսագրութենէն կերևի թէ Ալթըն զուտ հայկական տիպար մ'էր, կամքի և գործի տէր յարատեղ աշխատաւոր մը, որ կարող եղաւ կարեւոր ծառայութիւն մը մատուցանել այն երկրին որ այսօր զինքը պատուած է, և պատիւ կը բերէ այն ազգին՝ որուն կը վերաբերէր ինք:  
Ս. Կ. ԳԸԼԸՃՃԵՍՆ

**Արմեն Յ. Եանդղեան**  
( ՎԱԼԻ—ՍՍՅՔԼԻԻ )  
ԹԻԻ 2114 ՖԲԷՁՆՕ ԸՍԹԻԹ, ԹԵԼԷՖՅՕՆ, ՈՒԱՅԹ 717  
Կը փճառէ ՏԷՅԹԸՆ անուն համբաւաւոր հեծելանիւր զիւրամասաչիլի պայմաններով :  
**ՄԱՍՆԱԳԷՏ** Նորոգիչ ամէն տեսակ հեծերանիւի: Գեւ ոչ մի յաճախողը զժգոհ չէ մեկնած այս խանութէն: Փորձ մը պիտի համոզէ Ձեզ:  
Մասնաւոր ուշադրութիւն Հայ յաճախողաց:

**Ս. Ա. ՇՈՒԱՅՉԸՐ,**  
ՀԱՐԵԼՍ, ԹԱՄԲ, ՄՏԲԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵԻՆ.  
Ամեն տեսակ Նորուզումներ կըլլան փութով:  
1920 Մարտիտղա Ըթրիթ, Ֆրէզնօ:

**ԹՐԷՅՁ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ**  
ՍԵՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳԱՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԷՐԻ  
ՀԱՄԱՐ ԳՆԱ ԱՌ  
**ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.**  
1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՅՕՆ  
ՖԲԷՁՆՕ, ԳԱԼ ԷՔոչէն — թիւ 2

**Ֆ Բ Է Ձ Ն Օ**  
**ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ**  
ԳՐԱՍԵՆԵՍԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ  
ԱՅ ԿՎԷՆԹՈՒԲԱՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻԻՆԸ  
ԹԷԼԷՖՅՕՆ — — — ՄԵՅՆ 24  
ՖԲԷՁՆՕ, ԳԱԼԻՅՈՐԵՒԱ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆՍՄԱԿԱՆԻ

— 0 —

Պատժան, Սեպ. 5 1902

Քաղաքացին հաս ալ եկաւ:

Տեսանք կարգացինք և սիրեցինք: Շատեր հետաքրքիր են գիտնալ թէ ի՞նչ պակաս լեցնելու կուզայ Ձեր թերթը: Մեր կարծիքն այն է թէ Ձեր թերթով իրարմէ հազարաւոր մղոն հեռի եզրղ Հայ գաղութներու միջև յարարեալական որոշ կապ մը կը հաստատուի, որով աւելի մօտեցած կըլլանք իրարու և մեր ստացած անդական և չամչային լուրերու շնորհիւ, կամ մեր վիճակէն գոհ տեղերնս կը կենանք, և կամ վազենք Քալիֆորնիա կուզանք Ձերինին հետ մեր քսակին պակասն ալ լեցնելու: Եթէ այս պատասխանը հետաքրքիրներն չզոհացնէ՝ յանցանքը մերը չըլլար, այլ անոնց որ Ձեր թերթին բաժանորդ չեն:

Ժամանակին Ձեր ոսկւոյ հանքերն, այսօր ալ խաղաղի այգիներն են որ մերայնոց մաքերը կըբողեցնեն: Հոս ալ գուրներ կան որոնց մէջ ըզիզէ աւելի չամիչի կուտեր կը վիտան:

Եթէ հոտ գտնուող չամիչի վաճառականներէն քանի մը հաար բացը չիլին, վտանգ կայ որ շատ չանցած արևելեան նահապետները իրենց հաւատարիմ Հայ հասարակապետականներէն զրկուին:

Այս լուրը երկուքին համար ալ քաջաբերական է: Գուք բաժանորդներ պիտի չահիք, մենք ալ խաղաղ ակամջներ: Ներեցէ՛ք, խաղաղը խաղաղ չը կարդաք:

Ձեր թերթի առաջին թիւը կուսակցական գոյն չունէր: Երանի թէ շարունակէք այդ սեռակէտով անգոյն մնալ:

Հոս թերթերը լուռ բայց ահեղ պայքար մը կը մղեն իրարու հետ: Տակաւին որոշ չէ թէ որ կողմն է յաղթողը: Բայց մէկ կողմի կոիւը այնքան կատաղի հանգամանք մը ստացած է որ մեզ կը յիշեցընէ Եղիշէի «Արջք օրհասականք հզօրագոյնս կըռուէին»ը, Յուսանք և սպասենք:

Կը լսեմ թէ երէկ Պատժանի մէջ 12 անձերէ բաղկացեալ ժողով մը տեղի ունեցած է, նպատակին է եղեր Ֆրէզնոյի շուրջը գտնուած պարապ հողերը զընելով այգի անկել: Բայց որովհետև այդ տասներկուքին մէջ գտնուած չէ երկու մարդ որ իրարու վրայ կատարեալ վատաշուքին ունենան, առանց կուտելու ցրուած են: Պէտք է ըսել թէ այս տասներկուքն ալ Հայեր եղած են որոնց մէկը պատուելի մ'է:

Չենք գիտեր թէ ի՞նչ պատճառաւ, մանաւանդ վերջին քանի մը տարիներուն մէջ, մեր պատուելիներէն շատերը հոգիներէ աւելի արծաթ շահելու միտում մը ցոյց կուտան: Վաճառականական սեռակէտով վերջներ աւելի շահաւոր կերևի:

Ալ ինչու մեղադրել հասարակութիւնը որ իր հոգին եկեղեցականներու արամազրութեան տակ չի դներ, անուրդի հանուերու վախէն:

ՊԻՇԱԿ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

Քալիֆորնիոյ Երկրագործական Ընկերութիւնը Սաքրամենթոյի մէջ Արհեստահանդէս մը տուաւ շաքրութու մէջ: Հանդիսավայրին զոները բացուեցան հետաքրքիր ժողովրդին առջև Սեպ. 8ի երեկոյին: Քալիֆորնիոյ արուեստական, երկրագործական և ուրիշ ամեն ճիւղերը արժանավայել կերպով ներկայացուած էին արհեստահանդիսին մէջ: Մեր գաւառը՝ Ֆրէզնոն ուշադրութիւն զրաւող զիրք մը բռնած ու յաջողած էր իր արտադրութիւններն ի տես դնել շատ վայելուչ եղանակաւ:

—Պր. Յարիթ Նշիկեան որ Պայրըն Ըսփրինկի Չերմուկները գնացած էր իր վերջերս ունեցած յողացաւը բաժնու համար, կը լսենք թէ շատ գոհացուցիչ վիճակ ունի և սկսած է ապաքինիլ:

—Անցեալ երեքշաբթի օր Քալիֆորնիոյ՝ իբր նահանգ կազմակերպուած և Միացեալ Կառավարութեանց մէջ իբր գաշնակից Կառավարութիւն ընդունուած ըլլալու 52րդ տարեդարձն ու տօն օր մ'էր: Նահանգիս ամեն կողմերը ինչպէս նաև Ֆրէզնոյի մէջ հանդէսներ ու հրախաղութիւններ եղան այս առթիւ:

—Գրադարանի Միութեան Գործ. Ժողովը Միութեան շէնքը Քաղաքիս Դպրոցներու Վարչութեան վարձու տալու ինդիքն լուծելը իր իրաւասութենէն վեր գտնելով՝ մասնաւոր թուղթով մը զիմում ըրած է Միութեան անդամներուն՝ այս մասին անոնց կամքը ու կարծիքը հասկնալու համար:

—Տքթ. Յ. Թօփրահանեան և Վ. Արաքեան որք քանի մը շարթի իվեր քաղաքս կը գտնուէին, այս գիշեր Միութեւ կը մեկնին անկէ Նիւ Եորք երթալու համար:

ԱԶԳՍՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Յառաջիկայ Կիրակի 14 Սեպտեմբեր Ա. Զհնի Վերափոխման. Ազգային Եկեղեցւոյ մէջ Ժամերգութիւնք կ'սկսին ժամը Զ. 30ին:

Քարոզի ժամն 11. Նիւթն է «Մեր Հօրը Տունն»: Երեկոյեան ժամը 3ին կ'սկսի կիրակնօրեայ դասը. Նիւթն է Երբորդ պատուիրան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

ԶԵՐ ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ս. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷԶՆՕ ՔԱԼ.

Ընդհանուր Դատախազի համար

Ճ. Վ. ՃՕՆՍ

Հասարակապետականաց Ընտրելին

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

— 0 —

— Բիշ խօսէ շատ մտիկ ըրէ:

— Քաղաքավար եղիր և ցած խօսէ միշտ:

— Ցանկապատին վրայ եղող թռչունը կնկանդ գըլ-խարկին վրայ գտնուած երկու թռչունէն աւելի կարժէ:

— Ցաղողութեան ասուն է որ մարդիկ իրենց բարեկամները կուրանան:

— Ուրիշներու վրայ լու սպաւորութիւն թողու համար նախ սորուելու ես դուն քեզ կառավարել:

— Կան մեր մէջ մարդիկ որոնց համբաւը և նկարագիրը եթէ իրարու հանդիպէին ճամբու վրայ զիրար չի պիտի կրնային ճանչնալ:

Աբրահամ Լինքոլնի մէկ պատմութիւնն է հետեւեալը: Նախագահ թէյր իր ընտրութենէն երկու տարի վերջ ճամբորդութիւն մը ընել սրտեց ու զրկեց իր տղան Երկաթուղոյ ընկերութեան, իրեն համար առանձին կառախումբ մը ապադրելու համար: Երբ տղան իւր այցելութեան նպատակը կը հասկըցնէ շոգեկառքի պաշտօնէին՝ այս վերջինս, որ թէյրի քաղաքական հակառակորդներէն է եղած, կը պատասխանէ.

— Մենք Նախագահի համար յատուկ կառախումբ չենք կրնար ճամբայ հանել:

— Ի՞նչ. Զօրաւար Հարիսընի յուղարկաւորութեան համար առանձին կառախումբ առողջ դուք չէ՞րք:

— Այո, տղաս. Հօրդ համար այս գծի ամենէն փառաւոր կառախումբը յանձն պիտի առնեմ՝ տալ եթէ զայն հոս բերէք Զօրավար Հարիսընի վիճակին մէջ:

Անցեալները սովորելի մը մէկը կանչուած էր մեռելու մը ամիսը, որոյ թաղումը պիտի կատարուէր հետեւեալ օրը. սովորական գործողութիւններէ վերջ՝ վարպետ արհեստաւորը իր սովորութեան համեմատ հարցուց, «Աձելին ցու կը պատճառէ», պատմութիւնը դեռ չանցած ներկայ եղողներու վրայէն, սովորելը իր գործը լմնցուց և այս անգամ նորէն սովորականին համեմատ կանչեց, «նէքսթ»՝ այսինքն յաջորդը թող գայ ամիսելու:

Մարք Թուեն ճաշի հրաւիրուած էր օր մը իր բարեկամներու մէկին տունը: Սեղանին վրայ դժոխքի և արքայութեան վրայ վիճարանութիւն մը կը սկսի հիւրերուն մէջ: Տիկին մը տեսնելով թէ անուանի մատենագիրը մաս շատեր վիճարանութեան մէջ կը հարցընէ,

— Ինչո՞ւ համար դուք բան մը չէք ըսեր այս մասին. շատ կը փափաքէի ձեր կարծիքն ալ լսել:

— Ներեցէք Տիկին, ստիպուած եմ լուռ մնալու, վասնզի երկու տեղն ալ բարեկամներ ունիմ:

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Երբէք չէի, բայց միշտ պիտի ըլլամ: Մէկը չէ տեսած և չի կրնար տեսնալ զիս, բայց վստահութիւնը անխախտ է իմ վրայ անոնց՝ որք կապրին և կը շնչեն այս աշխարհի մէջ:

Լուծողներու առաջին երեքին նուէրներ ունինք:

ԱԼԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ Թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքես Թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար զիմէ Սըթրըն Փըրիֆիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին համար տուն կը վաճառէ միւսոյն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար գիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ  
Տիվիթըն Փասինճըր Էյճընթ: Սիթի Թիքէթ Էյճընթ  
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ձէՑ Փողոց,  
Նոր Փաթըրըն Պլաքին առջև

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՕ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ  
Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընօմայի ևն.  
գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԷՑՃԷՆԹՆԵՐ  
Իւրաքանչիւր սպաւոր զեղ ճանչցուած ՈՒԻԹՐՆԻ  
ՍԷՏԻՍԻՆԸ Լուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԿՈՒՁԵՆՔ

Ամեն հայաբնակ քաղաքի մէջ Շարաթաթերթս տարածելու համար: Պայմանները շատ նպաստաւոր են: Գրել Խմբագրութեան հասցէին:

Քաւրյ Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

Ընտրութիւն՝ Երեքշաբթի, Նոյ. 4, 1902  
Ճ Օ Ն Վ. Կ Ի Է Ր Շ Ա Ր Տ,  
Հանրապետական Ընտրելի ՇէՐԻՖԻ Համար  
Ձեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքով:

ՏԲԹ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ  
ՔՕՐՕՆԸՐԻ ՀԱՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

J. K. ELLEZIAN

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն  
Նպարեղեններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքիսկ փավալորի, ձիթաւաղի ևն.  
1145 ԱՅ փողոց —Ֆրէզնօ— Թէլէֆօն Պլաք 773

Պարքիօք Ըսքէյալըս,

Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարտիզին գիմնացը  
Թէլէֆօն, մէյն 174 — — — — — Ֆրէզնօ  
Վարձու կառքեր. ճամբորդներու ձիերուն հոգաստ  
րութիւն: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բաց ենք: